

27830

336.21

Գ-68

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԸՍՏ ԸՆԿԵՐ ԿԱԼԻՆԻՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԽՍԶՄ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ

Յ-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1928 թ.

11 2 APR 2013

13 JAN 2010

336.21(47)

Պրոլետարներ քվոր յերկրների. միացե՛ք

9-68 46

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԸՍՏ ԸՆԿԵՐ ԿԱԼԻՆԻՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԽՍԶՍ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ
Յ-ՐԴ ՆՍԱՇՐՋԱՆՈՒՄ

1003
13264

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ Հ.Ս.Խ.Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄՍԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

ՀԱՊՈՒԳՐԱՅԻ ԱՌԱՋԻ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 818 ր.

Պատվ. 3695

Տիրաժ 6000

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Ըստ ընկեր Կալինինի գեկուցման ԽՍՀՄ Կենսգործկոմի
3-րդ նստաշրջանում՝

Սորհրդային Միության մեջ որենքները քննում և հաստատում և Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, Վորը ժամանակ առ ժամանակ ունենում և իր նստաշրջանները:

Համամիութենական Գործադիր Կոմիտեի 3-րդ նստաշրջանը կապացավ 1928 թ. ապրիլի 10-ից մինչև 21-ը: Այդ նստաշրջանում Գործադիր Կոմիտեն գյուղատնտեսական հարկի նոր որենքի մասին լսեց չերկու գեկուցում և հաստատեց այդ որենքը: Առաջին գեկուցումն արեց Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝ ընկ. Կալինինը: Նա իր գեկուցումը սկսեց այսպես. — Սորհրդային Միության բնակչության մեծամասնությունը գյուղացիներ են. այդպիսի գյուղացիական չերկրում շատ բնական է, Վոր գյուղատնտեսական հարկի խնդիրը կարևոր քաղաքական նշանակություն և ստանում:

Այնուհետև ընկ. Կալինինը պատմում և, թե առաջ, չերը գյուղատնտեսական հարկ չկար, գյուղացիությունից հարկեր թե՛ ձեռով ելին գանձվում:

ՊԱՐԵՆ ԲԱՇԽՈՒՄ — ՊԱՐԵՆՀԱՐԿ — ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿ

Ռուսաստանում, Սորհրդային Իշխանության առաջին տարիներում, գյուղացիները հարկի փոխարեն պարտավոր ելին կառավարությունը հանձնել իրենց տնտեսությունից ստացած մթերքի ամբողջ ավելյուկը (հաց, չուղ, պանիր, ձու և այլն), պա-

հելով այնքան, վորքան հարկավոր եր իրենց ապրուստի համար: Այս ձևը կոչվում եր պարենբաշխում:

Իրանից հետո, նոր տնտեսական քաղաքականություն հետ միասին 1921 թվին այդ ձևը փոխարինվեց պարենհարկով: Գյուղացիները պարտավոր ելին կառավարությունը հանձնել իրենց մթերքների ավելցուկի մի մասը միայն: Իրանից հետո, լերը Խորհրդային Միության մեջ հաստատվեց կալուն գրամ—չերվոնցը—մտցվեց գյուղատնտեսական հարկը:

Գյուղատնտեսական հարկը բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունների մի ձև ե: Գյուղն այդ հարկով քաղաքին տալիս ե իր տնտեսության արտադրությունը (մթերքները) և փոխարեն նրանից ստանում ե գործարանային ապրանքներ, գյուղի համար շինվում են դպրոցներ, հիվանդանոցներ, ճանապարհներ և այլն:

Վերջին վեց տարվա ընթացքում գյուղատնտեսական հարկի գումարը (այն հարկի գումարը, վորը վճարում ե ամբողջ Խորհրդային Միության գյուղացիությունը) փնում ե համարյա անփոփոխ: Իսկ պետական բյուջեն, այսինքն այն ծախսերը, վոր պետությունն անում ե ժողովրդի համար՝ լերիու միլիարդից ավելացել ե մինչև վեց միլիարդ: Սա կհետևակի, վոր պետությունը գյուղացիությունից հարկ վերցնում ե համարյա նույն չափով, ինչ վոր վեց տարի առաջ, իսկ ժողովրդի վրա ծախսում ե յերեք անգամ ավելի, քան առաջ եր ծախսում:

1924 թվին ամբողջ Միության մեջ գյուղատնտեսական հարկի գանձվել ե	346	միլիոն	ուրբլի,
1925 »	250	»	»
1926 »	331	»	»
1927 »	320	»	»
Իսկ 1928 » գանձվելու չե	400	»	»
1928 թվի հարկը 1924 թվի հարկից ավելի չե միային 54 միլիոնով, իսկ բյուջեն այդ ժամանակվա ընթացքում ավելացել ե համարյա չերեք անգամ:			

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏԻ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Գյուղացու տնտեսության լեկամուտը այդ ժամանակվա ընթացքում նույնպես աճել ե: 1924 թվին ամբողջ Միության գյուղացիական տնտեսության լեկամուտը լեղել ե 9 միլիարդ

534 միլիոն ուրբլի (մեկ միլիարդ հավասար ե հազար միլիոնի), 1925 թվին լեկամուտ լեղել ե 12 միլիարդ 118 միլիոն ուրբլի, 1926 թվին՝ 12 միլիարդ 833 միլիոն ուրբլի, 1927 թվին՝ 13 միլիարդ 412 միլիոն ուրբլի, իսկ այս 1928 թվին այդ լեկամուտը արդեն պետք ե հասնի մոտ 14 միլիարդի:

Այս թվերից չերևում ե, վոր գյուղացիության լեկամուտը 1924 թվից սկսած՝ բավականի աճել ե: Յեթե գյուղատնտեսական հարկի գումարը համեմատենք գյուղացու լեկամուտի հետ, կը տեսնենք, վոր 1924 թվին գանձված հարկը հավասար ե լեկամուտի 3,6%-ին, այսինքն՝ պետությունը 1924 թվին վերցրել ե գյուղացու լեկամուտի ամեն մի ուրբլուց 3,6 կոպեկ:

1925 թվին հարկը հավասար եր լեկամուտի	2,1%	-ին
1926 թվին հարկը հավասար եր լեկամուտի	2,6%	-ին
1927 թվին հարկը հավասար եր լեկամուտի	2,3%	-ին
Իսկ 1928 թվին հարկը պետքեհավասար լինի լեկամուտի	2,9%	-ին:

Սա նշանակում ե, վոր թեև 1928 թվի հարկի գումարն ավելի չե, քան 1924 թվի հարկի գումարը, սակայն 1928 թվի հարկի ծանրությունը չի հասնում 1924 թվի հարկի ծանրության: 1924 թվին պետությունը վերցնում եր գյուղացու լեկամուտի ամեն մի ուրբլուց 3,6 կոպեկ, իսկ 1928 թվին ամեն մի ուրբլուց պետք ե վերցնի միայն 2,9 կոպեկ: Բայց վորովհետե պետությունը լեկամուտն աճել ե, ուստի այդ 2,9 կոպեկով հաշված հարկի ամբողջ գումարն ավելի չե, քան 1924 թվի հարկը:

Յեթե մեզ մոտ, Հայաստանում, համեմատենք գյուղացու ունեցած լեկամուտը նրա վրա բնկնող գյուղատնտեսական հարկի հետ, կտեսնենք վոր՝

1924 թվին նրա հարկը հավասար եր լեկամուտի	4,2%	-ին*
(այսինքն՝ մեկ ուրբլուցը—4,2 կոպեկ)		
1925 թվին հարկը հավասար եր լեկամուտի	2,2%	-ին,
1926 թվին հարկը հավասար եր լեկամուտի	2%	-ին,
1927 թվին հարկը հավասար եր լեկամուտի	1,8%	-ին:

*) Հարկի տոկոսները հաշված են գյուղատնտեսության ընդհանուր լեկամուտի համեմատությամբ, հանելով այդ գումարից վորոշ ծախսեր: Ընդհանուր լեկամուտի գումարները վերցրած են ՀՍԽՀ Պետականի տվյալներից:

Այս թվերից չերևում է, վոր հարկի ծանրութունը մեզ մոտ էլ, ինչպէս ամբողջ Միութեան մեջ, տարեց-տարի իջնում է: 1924 թվին գյուղացին իր ամեն մի ուրբի չեկամուտից վճարել է 4,2 կոպեկ հարկ, իսկ 1927 թվին չեկամուտի ամեն մի ուրբուց վճարել է 1,8 կոպեկ:

Այդ բոլորի հիման վրա պետք է ասել, վոր գյուղատնտեսական հարկի նոր որոնքը գալիք 1928 թվին գյուղացիութեան խոշոր մասի համար հարկի ծանրութունը չի ավելացնում: Ավելանալու չէ միայն ունեւոր գյուղացիութեան գյուղի տնտեսագիտութեան շերտի հարկը:

Անցյալ տարիներում, գյուղատնտեսական հարկը գանձվում էր մեծ գումարով և կազմում էր բյուջեի զգալի մասը:

Այժմ արգեն չերկրի տնտեսական դրութունն այնքան բարելավել է, վոր թույլ է տալիս հարկի ծանրութունը իջեցնել, (հարկը չեկամուտի համեմատութեամբ՝ տոկոսային հարաբերութեամբ իջել է)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՊՐՈԳՐԵՍՍԻՎ-ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ Ե

Յերբ մենք ասում ենք, վոր գյուղացիութեան ամբողջ չեկամուտն աճում է, սա զեւ չի նշանակում, թե բոլոր գյուղացիների տնտեսական դրութունը հավասար չափով լավանում է: Այս վերջին տարիներում գյուղատնտեսութունն առնասարակ բարձրացել է ու դրա հետ նաև ուժեղացել է գյուղացիութեան շերտավորումը:

Շերտավորութուն՝ նշանակում է, վոր գյուղացիութունը բաժանվում է տնտեսական գանազան սոցիալական խմբերի, այսինքն՝ հարուստ, միջակ և չքավոր խմբերի: Յերբ ասում ենք, շերտավորումը գլուղում ուժեղացել է, դա նշանակում է, վոր մի կողմից գատվել է չքավորութունը և նրա հետ կապված միջակ գյուղացիութունը, մյուս կողմից՝ գյուղի հարուստ ու շահագործող մասը: Այդ շերտավորումը (այսինքն հարուստի և չքավորի գատվելը) Մորհրդային Միութեան մեջ ավելի գանդաղ է առաջ գնում, քան կապիտալիստական չերկրներում, և ահա թե ինչու:

Մորհրդային կառավարութունն ամեն կերպ աշխատում է խանգարել ու գանդաղեցնել գյուղի հարուստ և շահագործող տնտեսութունների զարգացումը: Մյուս կողմից՝ նա չի թող-

նում, վոր միջակ գյուղացին աղքատանա, իսկ չքավորին ամեն կերպ ոգնում է, վորպեսզի նա կարողանա իր տնտեսութունը բարձրացնել: Հասկանալի չէ ուրեմն, թե ինչու Մորհրդային կառավարութունը այդպիսի քաղաքականութուն է տանում գյուղում. նա գյուղատնտեսական հարկը պրոգրեսսիվ - չեկամուտային հարկի ձևով է կերտում:

Պրոգրեսսիվ - չեկամուտային հարկը, դա այնպիսի հարկ է, վորը գանձվում է յուրաքանչյուր տնտեսութեան չեկամուտի և տնտեսական ուժի համեմատ: Հարկը կոչվում է չեկամուտային, վորովհետև հաշվվում է չեկամուտի գումարի համեմատ, իսկ պրոգրեսսիվ է կոչվում, վորովհետև հարկի չափը չեկամուտի աճման հետ միասին աճում է: Վորքան շատ է գյուղացու չեկամուտը՝ այնքան էլ նա շատ հարկ է վճարում:

1. Զբաւորութունը յեվ գյուղի բույլ սնեսութունները պես է բոլորովին ազատվեն հարկից,

2. Միջակ գյուղացիական սնեսութունները պես է վնասեն քեքեվ հարկ, յեվ

3. Հարկի զլխավոր ծանրութունը պես է բնկնի գյուղի ունեվոր յեվ հարուստ, կուլակ սնեսութունների վրա:

Հարկի այսպիսի պրոգրեսսիվ-չեկամուտային ձևը նոր չէ: Ինչ Մորհրդայինների 2-րդ և 3-րդ համագումարները, վորոնք կալացել են 1924 և 1925 թվերին, վորոշել էին, վոր մինչ այդ չեղած հարկի ձևը պետք է փոխարինվեր չեկամուտային պրոգրեսսիվ ձևի: Այդ վերջին ձևով հարկն ավելի ուղիղ և արդարացի չէ բաշխվում գյուղացիական տնտեսութունների միջև: Հարկի այդ ձևն ավելի չէ նպաստում գյուղացու տնտեսութեան զարգացմանը: 1926 թվից սկսած գյուղութուն ունի պրոգրեսսիվ-չեկամուտային հարկ: Տարեց-տարի հարկի որոնքն ավելի չէ կատարելագործվում և ուժեղացվում է պրոգրեսսիվ-չեկամուտային սկզբունքը: 1928 թվին ունեցն այդ ուղղությամբ աճում է մի նոր բայ:

Ինչպէս հարկի այդ ձևը 1926 թվից առաջ չէր կիրաւում, վորովհետև չերկրի տնտեսութունը զեւ բավականաչափ չէր զարգացել: Այդ պայմաններում շատ զժվար, նույնիսկ անհնարին էր չեկամուտային հարկ մտցնել:

Չպետք է մոռանալ, վոր Մորհրդային Միութեան մեջ կա մոտ 25 միլլիոն գյուղական տնտեսութուն: Այդ տնտեսութունները գանձվում են շատ տարբեր շրջաններում և նրանց տնտե-

սական գրութիւնն եւ միմյանցից շատ տարբեր ե: Մի տեղ հոգը հերկում են տրակտորով և նուէն տեղում նուէն հողի կողքին վարն անում են արորով: Մի տեղ, ինչպես որինակ Մոսկվայի նահանգում, անտեսութիւնը վարում են կուլտուրական ձևերով. իսկ մի այլ տեղ գլուզացիները դեռ քոչվորական կյանք են վարում:

Այս վերջին շրջու տարվա փորձը ցույց է տալիս, վոր մեր ընդունած հարկի ձևը նպատակահարմար է և լիովին արդարացնում է իրեն:

**ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 35 ՏՈԿՈՍԸ
ՀԱՐԿԻՑ ԱՁԱՏ ԵՆ**

Գյուղացու չեկամուտի և հարկի թվերը համեմատելով, տեսնում ենք, վոր հարկի այդ ձևն իսկապես արդարացվում է:

Յեթն չքավոր և թույլ անտեսութիւններ համարենք այն անտեսութիւնները, վորոնց տարվա չեկամուտը 150 սուր. ալիւի չե, կը նկատենք հետեւյալը:

Անցյալ տարի Ռուսաստանում այդ չքավոր և թույլ անտեսութիւնները կազմում էին բոլոր անտեսութիւնների 30 տոկոսը և ունեւին ամբողջ չեկամուտի մոտ 12 տոկոսը, բայց վճարում էին հարկի մոտ 6 տոկոսը:

Այս քաղաք ունեւնով սնտեսութիւնների 35 տոկոսը պետ է բոլորովից ազատվեց հարկից:

Ուրեմն, այս տարի այդ չքավոր խումբը հարկից բոլորովին ազատ կլինի ու չի վճարի նուէնիսկ այն 6 տոկոսը, վորը վճարում էր անցյալ տարի: Յեթն միջակ համարենք 150 ու մինչև 400 ու չեկամուտ ունեցողներին, ապա այդպիսի անտեսութիւնները Ռուսաստանում կը կազմեն բոլոր անտեսութիւնների 57 տոկոսը: Այդ անտեսութիւններն անցյալ տարի ունեւին ամբողջ չեկամուտի 59 տոկոսը, բայց վճարում էին ամբողջ հարկի 47 տոկոսը:

Գյուղի ունեւոր և հարուստ մասը Ռուսաստանում կազմում է ամբողջ անտեսութիւնների 12-13 տոկոսը: Այդ անտեսութիւններն ունեն ամբողջ չեկամուտի 30 տոկոսը, այսինքն՝ չեկամուտի մոտ չերրորդ մասը, բայց վճարում են ամբողջ հարկի 47 տոկոսը: Մտաւորապես նուէն ձևով կը բաժանվում է հարկը Ուկրաինայում:

Ամբողջ խորհրդային Միութեան մեջ հարկից ազատվել են՝
1924 թվին — 5 և կես միլիոն անտեսութիւն,
1925 թվին — 5 և կես միլիոն անտեսութիւն,
1926 թվին — 6 միլիոն 800 հազար անտեսութիւն,
1927 թվին — 8 և կես միլիոն անտեսութիւն:

Ուրեմն, ուր չեկ կես միլիոն գյուղացիական սնտեսութիւն

1927 թվին հարկ չեց վճարել:

Մեզ մոտ՝ Հայաստանում, այդ տարիներում գյուղհարկից ազատվել են՝

1924 թվին — քառասուն չորս հազար 701 անտեսութիւն,
1925 թվին — քառասուն վեց հազար 071 անտեսութիւն,
1926 թվին — հիսուն ութ հազար 072 անտեսութիւն,
1927 թվին — վաթսուն մեկ հազար 908 անտեսութիւն,
1928 թվին — հարկից ազատվող անտեսութիւնների թիվը

անցյալ 1927 թվին համեմատութեամբ՝ պետք է ավելի լինի:

Այս տարիների ընթացքում ինչ աչքի ընկնող բան ենք տեսնում մեր հարկային քաղաքականութեան մեջ: Մի կողմից՝ գլուղի հարուստ և ունեւոր անտեսութիւնների հարկը շարունակ ավելանում է և, միևնուէն ժամանակ, միջակ գյուղացիութեան հարկը մնում է անփոփոխ: Մյուս կողմից՝ տարեց-տարի ավելանում է հարկից ազատվող անտեսութիւնների թիվը: Հիմա արդեն հարկից ազատվում են բոլոր անտեսութիւնների մի շրջը:

Յեթն Հայաստանում համեմատելու լինենք գյուղացիութեան գանաղան խմբերի այս վերջին շրջու տարվա չեկամուտը, կը տեսնենք հետեւյալը՝

1. Թեև չքավոր և միջակ գյուղացու չեկամուտն աճում է, բայց նրանց վրա ընկնող հարկը պակասում է, կամ մնում է անփոփոխ:

2. Ունեւոր և կուլակ գյուղացու չեկամուտը նուէնպես աճում է, բայց ավելի պակաս թափով, իսկ նրա վրա ընկնող հարկը ավելանում է զգալի չափով: Այս ձևով ունեւորը և կուլակը թուլանում են, իսկ չքավորի և միջակի անտեսութիւնը բարձրանում է:

**ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒՂՂՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Այս բոլորը դեռ չի նշանակում, վոր մեր գյուղատնտեսական հարկը թերութիւններ և պակասութիւններ չունի:

ի հարկէ, պակասութիւններ կան: Ամենագլխավոր պակասութիւնն այն է, վոր մեր հարկային մարմինները չեն կարողանում հաշվի առնել գյուղացու տնտեսութեան իսկական ամբողջ չեկամուտը:

Գյուղացու տնտեսութեան չեկամուտը հաշվվում է տնտեսութեան ունեցած հողի, անասունի և այլնի քանակով և չեկամուտի միջին չափով (նորմայով): Այդպիսի ձևով, բնական է, վոր ունեւոր շատ գյուղացիների չեկամուտները հաշվի չեն առնվում և հարկի տակ չեն ընկնում: Այդ բանը պարզ է, տեղում աշխատող չտրաքանչուր ընկերոջ համար:

Որինակ, գյուղացին ունի մի ձի, վոր արժի 20 ու., մյուսի ձին արժի վոչ թե 20 ու., այլ 300 ու.: Այդ չեկու ձիներն ել հաշվվում են մեկ չեկամուտի նորմայով և հարկի տակ են ընկնում հավասարապես:

Շատ ճիշտ է ասում ընկ. Ռիկովը, թե՛ կապիտալիստական տարրերը (հարուստները, շահագործողները) իրենց այնքան էլ լավ չեն զգում խորհրդային կարգերում, բայց արդեն տասնևմեկ-չեքորդ տարին է, վոր նրանք ապրում են մեր կարգերում: Նըրանք արդեն լավ գիտեն մեր բոլոր որենքներն ու այդ պատճառով նրանք կարողանում են թագցնել իրենց իսկական չեկամուտը: Ահա թե ինչու այդ հարուստ տնտեսութիւնները մինչև այժմ չնչին հարկ ելին վճարում: Այդ տնտեսութիւնների իսկական չեկամուտները հարկի տակ դնելու համար այս տարի կառավարութիւնը մտցնում է անհասական հարկում:

Այս կը նշանակի, վոր հարուստ տնտեսութիւնների չեկամուտը պետք է հաշվել վոչ թե միջին նորմաներով, այլ առանձին ձևով: Պետք է հաշվել այդ տնտեսութիւնների մեջ իսկապես ստացված ամբողջ չեկամուտը՝ հատուկ ձևերով: Անհատական ձևով պետք է հաշվվի շատ քիչ տնտեսութիւնների չեկամուտը, ընդամենը՝ բոլոր տնտեսութիւնների 2 կամ 3 տոկոսը:

Այդ աշխատանքը, այսինքն՝ անհատական ձևով չեկամուտները հաշվելը պետք է կատարեն տեղական խորհրդային մարմինները: Նրանք այդ գործում պետք է շատ զգուշ և ուշադիր լինեն: Մասնավանդ՝ զգուշ պետք է լինել այն խնդրում, թե վոր տնտեսութիւնը պիտի համարել հարուստ: Այդ գործում տեղական խորհուրդներին պետք է ուզեն հասարակական կազմակերպութիւնները, մասնավանդ չքավորական խորհրդակցութիւններն ու խմբակները:

Այդ աշխատանքը դժվար չէ տանել, չեթե մեր գյուղի հասարակական կազմակերպութիւնները ճիշտ ըմբռնեն հարցի կարևորութիւնը: Չքավոր և միջակ գյուղացիութիւնը պետք է կազմակերպված կերպով աշալուրջ հսկի, վոր իր դասակարգային թշնամին՝ կուլակը չկարողանա թագցնել իր չեկամուտները: Մեր գյուղում բոլորն էլ կարող են մատնելի վրա հաշվել իրենց հարևանների չեկամուտները: Կուլակի չեկամուտները շատ ավելի բարդ են. նա խորամանկորեն շատ բան հենց իրեն բարեկամ համարող հարևանից թագցնում է. թագցնում է վոչ միայն իր թշնամի չքավորից ու միջակից, այլ և իր հարուստից՝ գյուղի իրա նման չեկերորդ կուլակից: Դրա համար էլ պետք է հետևել, լրիվ տեղեկութիւններ ժողովել նրանց մասին և ստուգել, թե արդոք հաշվառման գործը կարգին է, ամեն ինչ գրված է:

Մեր գյուղատնտեսական հարկի պակասութիւններից մեկն էլ այն է, վոր գյուղատնտեսութեան զանազան ճյուղերի վրա հարկն ընկնում է անհավասար չափով:

Այժմ հարկի համարյա ամբողջ ծանրութիւնն ընկնում է հացահատիկային մշակույթների վրա: Այն տնտեսութիւնները, վորոնք զբաղվում են գլխավորապես հացահատիկների մշակույթով, ավելի ծանր հարկ են վճարում, քան մյուս տեսակի տնտեսութիւնները: Որինակ՝ շատ թեթե հարկ է ընկնում վոչ գյուղատնտեսական չեկամուտների վրա: Հարկի տակ են ընկնում այդ վոչ գյուղատնտեսական չեկամուտների շատ չնչին մասը: Վորպեսզի այդ անհավասարութիւնը վերացվի, գյուղհարկի նոր որենքով թեթեացրած է հացահատիկի ցանքերի վրա ընկնող հարկը: Հացահատիկի մշակույթով զբաղվող տնտեսութիւնը պետք է ստանա վորոշ արտոնութիւններ: Բացի դրանից, նոր որենքը տալիս է մի շարք շատ կարևոր արտոնութիւններ կուլակիով տնտեսութիւններին:

Կուլեկտիվ տնտեսութիւնը գյուղում տնտեսութեան նոր ձև է: Յրված, զատ-զատ տնտեսութիւններով մենք չենք կարող շատ առաջ գնալ. գյուղի կուլեկտիվացումը՝ սոցիալիզմին հասնելու կարևոր միջոցն է: Դրա համար էլ իշխանութիւնը գյուղում տանում է այն քաղաքականութիւնը, վոր գյուղը ծրագրված, հաստատուն քայլերով կուլեկտիվացման չեկամուտով վարկավորում է, արտոնութիւններ է տալիս, հետևաբար հարկի գործում էլ նույն այդ քաղաքականութիւնը պահպանվում է:

Գյուղացիութիւնը կարող է դեպի կուլեկտիվ գնալ միայն

այն ժամանակ, չերը կը տեսնի, վոր տնտեսութեան այդ ձևը ձեռնտու չե: Դրա համար ել մենք պետք է ցույց տանք, վոր կողմէ արիւմ տնտեսութեանը ձեռնտու չե և գլուղացու համար մեծ առավելութեաններ ունի:

Դեռ Ենգելսն ասել է, վոր մենք պետք է աշխատենք գլուղացու մասնավոր սեփականատիրական տնտեսութեանը փոխարինել ընկերական սեփականութեան, բայց վոչ ստիպողական ձևով, այլ լավ որինակով և ոգնութեամբ:

Այդ նպատակն ել ունի նոր որենքը, վորը խոշոր արտոնութեաններ է տալիս կողմէ կտիւններին:

Ահա, սրանք են բոլոր կարևոր փոփոխութեանները, վոր մտցված են նոր որենքի մեջ:

ԻՆՔՆԱՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ինքնատուրքը: Խորհրդային իշխանութեան որոք գլուղը զարգացել է վոչ միայն տնտեսապես, այլև կուլտուրապես: Գլուղը պահանջում է դպրոց, հիվանդանոց, անասնաբուժական և գլուղատնտեսական կայաններ, խրճիթ-ընթերցարաններ և այլն:

Այդ բոլոր պահանջները հնարավոր չի բավարարել միայն պետական միջոցներով:

Մյուս կողմից, շատ արգարացի կլինի, վոր գլուղացին ինքն ել մասնակցի այդ ծախսերին, վոր նրա մեջ հասարակական կամքը ուժեղանա, զարգանա և նա ալիլի ուշադիր, հարազատ վերաբերմունք ունենա դեպի գլուղի կուլտուրական հաստատութեանները:

Ահա այդ նպատակի համար ել մեզ մոտ գանձվում է ինքնատուրքը: Ինքնատուրքը նոր բան չէ. նա գոյութեան ունի և Խորհրդային իշխանութեան որերում և գոյութեան ունի պատերազմից առաջ: Պատերազմից առաջ նա կոչվում էր «համայնական տուրքեր»:

Ինչ՞ով է տարբերվում մեր ինքնատուրքը հին ուժեղի «համայնական» տուրքից:

Հին ուժեղի ժամանակ ինքնատուրքի գումարի խոշոր մասը ծախսվում էր գլուղի և շրջանի վարչական ապարատի վրա, այսինքն՝ գավառակային պրիտամիսերի, գլուղական տանուտներին վրա և այլն:

Մեզ մոտ միանգամայն արգելված է իճճնասուրքի գումար-

ները ծախսել վարչական ապարատի վրա: Այդ գումարները ծախսվում են գլուղի հասարակութեան վորոշած նպատակների համար: Այդ նպատակներն ել պետք է անպայման ուղղված լինեն գլուղի կուլտուրական շինարարութեանը, այսինքն՝ դպրոցի կամ ճանապարհ շինելու, կամ մի այլ նման գործի համար:

Յերկրորդ տարբերութեանն այն է, վոր հին համայնական տուրքերը գանձվում էին բոլորից հավասարապես, շահերի կամ հողի գեղատիրների քանակով: Բոլորովին հաշվի չեյ առնվում տնտեսութեան ունակութեանը (այսինքն՝ տնտեսական ուժը): Մեր ինքնատուրքը ծխերի մեջ բաժանելու ժամանակ նկատի չեն առնվում չուրաքանչյուր ծուխի ունակութեանը. չուրաքանչյուր տնտեսութեան վրա տուրք գրվում է նրա կարողութեան չափով:

Ինչպե՞ս պետք է ասել, վոր գործնականում ինքնատուրքի կամպանիայի ժամանակ տեղերում սխալներ են արվել:

Յերբ մենք ասում ենք, թե ինքնատուրքը պետք է կատարվի գլուղացիներին ազատ կամքով — սա դեռ չի նշանակում թե ստիպողական վոչինչ չկա: Այստեղ կա ստիպողութեան՝ հասարակական ստիպողութեան, այսինքն՝ հասարակութեան մեծամասնութեանը ստիպում է փոքրամասնութեանը՝ մասնակցել այս կամ այն շինարարական կամ կուլտուրական ծախսերին: Դա վարչական ստիպողութեան չէ. ստիպում է վոչ թե կառավարութեանը, այլ ինքը գլուղացիութեանը:

Խորհրդային իշխանութեանը միշտ կարող է այդպիսի կամպանիաներ տանել, վորովհետև նրանք միշտ ել ժողովրդի շահերի համար են կատարվում: Ինչ գուրա կգար, չեթե այդ հասարակական ստիպողութեան չլիներ — կուլակը, վորը իսկի շահագրգռված չէ և ընդհակառակը՝ գեմ է բանվորի և գլուղացու իշխանութեան՝ Խորհրդային իշխանութեան դարգացման գործին վոչ մի կոպեկ ել չի տա, բայց գլուղի հասարակական կամքը նրան հարկադրում է, ստիպում է մասնակցել: Նա թող գրանից հետո ինչքան ուզում է ծուռը մախի տա, նրա փուլը մենք գլուղի ընդհանուր կուլտուրական շինարարութեան վրա կը ծախսենք: Ինքնատուրքի նպատակները պետք է լավ բացատրել, հառկացնել գլուղացիներին և վոչ թե ստիպել, ինչպես այդ լիզել և վորոշ տեղերում:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԵԼԸ

Սորհրդային պետությունը ժամանակ առ ժամանակ տարածում է ժողովրդի մեջ զանազան փոխառություններ: Այլ փոխառությունները նպատակ ունեն ժամանակավորապես վերցնել ժողովրդի մեջ կուտակված զրամը և ոգտագործել շինարարության համար և գյուղատնտեսությունը կամ արդյունաբերությունը զարգացնելու համար:

Գյուղացիական փոխառության միջոցով պետությունը մտադրություն ունի հավաքել գյուղացիության կուտակումները և այդ զրամը ծախսել գյուղատնտեսությունը բարձրացնելու և զարգացնելու համար:

Այն զրամը, վոր պետությունը փոխառության միջոցով հավաքում է, տոկոսներ և բերում և աճում է: Յեթև պարտատոմսի տերը ուզենա հետ ստանալ իր զրամը, նա միշտ կարող է այդ անել:

Դրամը վերադարձվում է նրան տոկոսներով:

Գյուղացիական փոխառությունը տեղերում տարածելու ժամանակ չեղել են առանձին սխալներ. որինակ՝ մի քանի դեպքերում պարտատոմսը վաճառվել և ստիպողաբար: Սա, ի հարկե, անթույլատրելի չէ:

Ընդհանուր առմամբ, փոխառության տարածման կամպանիան ցույց տվեց, վոր Սորհրդային իշխանությունն ուժեղ է: Մի քանի տեղերում այդպիսի սխալներ և թյուրիմացություններ չեղել են. սակայն զրամը հազվագյուտ դեպքեր չեն չեղել: Դա բացատրվում է նրանով, վոր պարտատոմսերը տարածելու համար տեղական մարմինները շատ քիչ ժամանակ ունեցին և հարկավոր եր շտապել: Գյուղացիներին շատ տեղերում չի բացատրվել փոխառության նպատակը և պայմանները: Ժամանակը քիչ լինելու պատճառով, վորոշ տեղերում հնարավոր չի չեղել մասնաշաղկանացնել այդ կամպանիայի իմաստը, այդ պատճառով էլ տեղի չեն ունեցել նման թյուրիմացություններ:

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ չեղրակացություն կարող ենք գալ, քննելով Սորհրդային իշխանության հարկային քաղաքականությունը: Բոլորի համար միանգամայն պարզ է, վոր Սորհրդային իշխանության

որոք հարկերի մեծ ծանուրյունն ընկնում է բնակչության ունեվոր մասի վրա: Յեվ վորքան շատ հարուստ և ապահոված է քաղաքացին, այնքան ավելի ծանր է լինում նրա հարկը: Դրա հետ միասին տարեց-տարի ավելի թվով չքավոր և թույլ գյուղացիներ ազատվում են հարկից:

Յեկամտային հարկը բոլոր սոցիալիստական կուսակցությունների ծրագրերի մեջ կա: Վերջին տարիներում մի քանի չեկոսպական չեղրներում իշխանությունը սոցիալիստական կուսակցությունների ձեռքումն էր: Բայց այդ կուսակցություններից և վոր մեկը չը փորձեց կիրառել չեկամտային հարկը: Կարելի չե ասել, վոր վոր մի չեկոսպական պետության մեջ նրման չեկամտային հարկ չկա: Պրոգրեսսիվ-չեկամտային հարկը առաջին անգամ մեզ մոտ՝ Սորհրդային Միության մեջ է կիրառվում:

Այժմ տեսնենք, թե վճարող են այդ հարկի գլխավոր ըսկզբունքները:

Ամենից շատ հարկ են վճարում մեզ մոտ այն անձինք, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը և զբանով հարստություն են ձեռք բերում՝ որինակ գործարանատերերը, վորոնք ունեն վարձու բանվորներ, առևտրականները և այլն: Դրանցից ավելի քիչ հարկ են վճարում այն քաղաքացիները, վորոնք ապրում են իրենց սեփական աշխատանքով. այսինքն՝ տնայնագործները, արհեստավորները, գյուղացիները և այլն: Ամենից քիչ հարկ վճարում են այն անձնավորությունները, վորոնք վաճառում են իրենց աշխատանքը, այսինքն՝ վարձվում են. զբանք բանվորներն են:

Վոր մի չեղրում այդպես զգուշ չեն մտանում ձեռնարկություններում աշխատող բանվորներին, ինչպես մեզ մոտ: Այլ կերպ էլ չի կարող լինել բանվորի և գյուղացու պետության մեջ:

Յերբ բուրժուական կառավարությունը մի վորեկ հարկ է մտցնում, նա մտածում է այն մասին, թե ինչպես հեշտությամբ գանձի այդ հարկը և վորքան կարելի չե քիչ փաստի բնակչության այն մասին, վորի վրա հենվում է այդ կառավարությունը: Որինակ՝ նախկին ցարական Ռուսաստանի կառավարությունը հենվում էր կալվածատերերի և կապիտալիստների վրա: Այդ կառավարությունն աշխատում էր իր հարկերով, վորքան կարելի չե, քիչ փասել կալվածատերերին և կապիտալիստներին:

Պորճրդալին կառավարութիւնը բոլորովին այլ կերպ և նախում իր հարկերին:

Պորճրդալին կառավարութեան համար գլուղատնտեսական հարկը միայն չեկամուտի աղբյուր չէ, այսինքն՝ միայն զբամ հավաքելու միջոց չէ: Գլուղատնտեսական հարկի միջոցով Պորճրդալին կառավարութիւնն աշխատում է թուրքացնել գլուղում կապիտալիստական տարրերը, թուրքացնել գլուղի կուլակին — զտքային: Մյուս կողմից՝ գլուղատնտեսական հարկի միջոցով ուժեղացվում են գլուղում սոցիալիստական տարրերը, այսինքն՝ ուժեղացվում են անտեսութեան այն ձևերը, վորոնք տանում են գեպի սոցիալիզմ:

Գլուղացիութեան համար ամենից զժվար և անցնել կյանքի այդ նոր ձևերին: Դրա համար ել մեր բյուջեն ձգտում է ամենից խոշոր գրամական և նյութական ոգնութիւն ցույց տալ գլուղացիութեանը:

Վորպեսզի կարելի լինի ոգնել գլուղացիութեանը, նոր կյանք ստեղծել՝ գլուղահարկի ամբողջ գումարը բավական չէ:

Այդ պատճառով ել խոսեցդային պետութիւնը վոյ միայն վերագործնում է գլուղացիութեանը նրանից վերցրած գլուղացնեստական հարկը. այլեւ սարեց սարի ավելացնում է լրացուցիչ գումարները:

1923—24 թվին ամբողջ Միութեան մեջ գլուղատնտեսութիւնը բարձրացնելու և, առհասարակ, գլուղացիութեանն ոգնելու համար պետութիւնը ծախսել է 300 միլիոն ու.
1925 թվին այդ նպատակով ծախսվել է 450 միլիոն ու.
1926 թվին նույն նպատակով ծախսվել է 550 միլիոն ու.
և 1927 թվին նույնպէս այդ նպատակով ծախսվել է 714 միլիոն ու.:

Յեթն հիշենք, վոր նույն այդ տարիներում գանձվել է գլուղատնտեսական հարկ 250 միլիոնից մինչև 346 միլիոն ու., կը տեսնենք, վոր պետութիւնը շատ ավելի է ծախսում գլուղացիութեան վրա, քան վերցնում է նրանից:

Յեթն պետութիւնը նպատակ ունենար գլուղատնտեսական հարկի միջոցով միայն զբամ հավաքել, նա կարող էր պակասեցնել այդ հարկը և միաժամանակ պակասեցնել գլուղատնտեսութեան վրա կատարվող ծախսերը: Բայց բանը նրանումն է, վոր գլուղատնտեսական հարկի միջոցով պետութիւնն աշխատում է փոփոխել գլուղացիութեան հասարակական-անտեսական կյանքի կառուցվածքը: Դա կը նշանակի, վոր պետու-

թիւնը հարկի միջոցով ճնշում է գլուղի հարուստ շահագործող մասը և չի թուլ տալիս վոր նա ուժեղանա և ավելացնի իր հարստութիւնը: Մյուս կողմից՝ պետութիւնը պաշտպանում է և բարձրացնում միջակ և չքավոր անտեսութիւնները: Թուրքացնելով գլուղի Եսկագործող հարուստ մասին, մեք բարձրացնում ենք գլուղի չքավոր մասի սնեստութիւնը: Մրանով մենք փոփոխութեան ենք չենթարկում գլուղացիութեան զանազան խմբերի փոխհարաբերութիւնը:

Մեզ կարող են ասել, թե դուք ճնշում եք հարուստներին, բայց գրանով չքավորի դրութիւնը չի լավանում: Թեկուզ հարուստի և չքավորի մեջ հարաբերութիւնները փոխվում են, վորովհետև հարուստը թուլանում է, բայց գրանով չքավորի դրութիւնը չի լավանում: Այստեղ մենք հարցին մոտենում ենք մի այլ կողմից:

Այս սարի մեք ծախսում ենք գլուղացնեստութեան վրա 714 միլիոն ու., այսինքն՝ 300 միլիոնով ավելի, եւն գլուղացնեստական հարկի գումարն է:

Այդ 714 միլիոն ուրբին մենք աշխատում ենք գլուղացու անտեսութեան մեջ ծախսել այն ձևով, վորպեսզի նրանք նույնպէս փոխեն գլուղի զանազան խմբերի փոխհարաբերութիւնը: Գլուղացնեստական հարկը գանձելով, մեք բուլացնում ենք գլուղի հարուստ մասը: Այդ 714 միլիոնը ծախսելով, մեք ոգնում ենք չքավորութեանը, գարգացնում ենք կուլեկիվ սնեստութիւնները, ոգնում ենք կոոպերացիային: Այդ բոլոր միջոցներով մենք փոխում ենք գլուղական հասարակութեան սոցիալական կազմը:

Սա նշանակում է, վոր գլուղում առաջ տիրում էր հարուստը, և թե չքավոր, թե միջակ գլուղացին կախված էին նրանից: Այժմ, այդ բոլոր միջոցների շնորհիվ հարուստը թուլանում է, իսկ միջակ և չքավոր անտեսութիւնը՝ կուլեկալիվ արնտեսութեան և կոոպերացիայի միջոցով՝ հնարավորութիւնն են ստանում զարգացնել և բարձրացնել իրենց անտեսութիւնը:

Պորճրդալին իշխանութեան քաղաքականութիւնը գլուղում հասկանալի կը լինի միայն այն ժամանակ, չերք մենք կը միացնենք այդ չերկու խնդիրները: Միևնույն նպատակին մենք մոտենում ենք չերկու կողմից: Յեկամտային հարկի միջոցով մենք վերցնում ենք զբամը գլուղի հարուստ մասից և պետական բյուջեից ավելի ու ավելի խոշոր գումարներ ծախսում չքավոր

1003
73264

գլուղացիութեանն ոգնելու համար: Մեր նպատակները շիտակ են: Այդ տեսակետից մենք միանգամայն հակառակ ենք կապիտալիստական աշխարհին:

Կապիտալիզմը գլուղացու ամենամեծ թշնամին է: Կապիտալիստական աշխարհը ամեն տեղ գլուղացիներին ստրուկ է դարձնում: Բոլորովին հակառակն է կատարվում Սորհրդային Միութեան մեջ. — մենք բարձրացնում ենք գլուղի աղքատ մասը, մենք աշխատում ենք նրան մասնակից անել կոլլեկտիվ անտեսութեանը, աշխատում ենք բարձրացնել, զարգացնել նրա մանր անհատական անտեսութեանը, ամեն միջոցներով աշխատում ենք, վորպեսզի գլուղի չքավորի և կուլակի մեջ տարբերութիւն չլինի, վորպեսզի վերջ գրվի կապիտալիզմին:

Մեր պրոգրեսիվ-յեկամհայից հարկը զստակարգային հարկ է: Վոչ մի բուրժուական պետութիւն չի խոստովանում, վոր նա դասակարգային հարկեր ունի, դասակարգային քաղաքականութիւն է վարում: Ինչու, վորովհետև նա վախենում է: Բուրժուական հասարակութիւնը ինքը դասակարգեր է ստեղծում, որեցոր աջանակ սրվում են աշխատանքի և կապիտալի հակասութիւնները և պաշտարը: Իսկ մենք, վոր դասակարգային քաղաքականութիւն ենք վարում և թուլացնում ենք կապիտալիստական խավը, մենք աշքատում ենք ստեղծել այնպիսի հասարակութիւն, վորի մեջ դասակարգեր չլինեն:

ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԿԸ ՍԻԱԼՎԵՆ

Մեր թշնամիները գուշակում են, վոր Սորհրդային իշխանութեան և գլուղացիութեան միջև, քաղաքի և գլուղի միջև պետք է պառակտում առաջ գա: Նրանք այդ բանում նույնպես սխալվում են, ինչպես սխալվել են շարունակ այս տասնամեկ տարվա ընթացքում:

Նրանք կը սխալվեն և ահա թե ինչու:

Կապիտալիզմը զարգանալով ավելի ու ավելի չե ճնշում, վոչնչացնում գլուղացիութիւնը: Կարելի՞ չե դրանից հետո ասել, թե կոմունիզմը ճնշում է գլուղացիութիւնը:

Ինչու մեզ մտա հարչուրավոր միլիոններ են ծախսվում գլուղական անտեսութեան վրա: Վորպեսզի միլիոնավոր չքավոր գլուղացիներին թանկնք դեպի արտագրութեան ավելի բարձր աստիճան: Դրա համար հարկավոր են ահագին միջոցներ և խո-

շոր աշխատանք: Ահա այդ ազնիվ նպատակներն ունի Սորհրդային իշխանութիւնը:

Նրա աշխատանքի մեջ կան զանազան մասնավոր սխալներ և պակասութիւններ: Ընդհանրապես աշխատանքի մեջ մեր կուլտուրական հետամնացութեան շնորհիվ չեղած այդ սխալներն արդարացվում են նրանով, վոր Սորհրդային իշխանութեան ընդհանուր նպատակներն ազնիվ են և շիտակ: Այդ սխալները, բանվորների և գլուղացիների՝ մեր խորհրդային շինարարութեան գործին ակտիվ մասնակցութեան, մասսաների համագործակցութեան միջոցով տարեց-տարի պակասում են ու վերանում:

Այդ մեր նպատակները, կրկնում է ընկեր Կալինինը, այն են, վոր մենք աշխատում ենք միլիոնավոր գլուղական անտեսութիւններ, վորոնք ալժմ աղքատ են և վորոնց չեկամուտը տարեկան տասնյակ ուրբլիներ է միայն — այդպիսի անտեսութեաններն աշխատում ենք բարձրացնել և թուլ չենք տալիս, վոր նրանք ստրուկներ զանան, ինչպես դա անում է կապիտալիզմը:

Այդ անտեսութիւնները բարձրացնելով, կուլտուրապես կը մեծացնենք ու կամրացնենք մեր նվաճումները և գլուղը կը տանենք սոցիալիստական շինարարութեան հունով, կարագացնենք սոցիալիզմի կառուցումը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0205557

